

Ծ Ր Ա Գ Ի Ր

«Սուրբ Հովհաննես եկեղեցուն հարակից հենապատերի վերականգնում»

1.	Ծրագրի նպատակը	ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի տարածքում գտնվող Սուրբ Հովհաննես եկեղեցուն հարակից հենապատերի ամբողջական ամրակայում և վերականգնում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Երկիր եւ մշակույթ համագգային կազմակերպության» (10, քաղաք Հերոն, 75010, Փարիզ) Organisation Terre et Culture (10, Cité Héron, 75010 Paris):
4.	Ծրագիրը կատարողը	«Երկիր և մշակույթ համագգային կազմակերպության» հայաստանյան մասնաճյուղ (ՀՀ քաղ. Երևան, Զավարյան փող., 86 տ., ՀՎՀՀ՝ 02652056):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնք՝ հոգևոր բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	22,889,840 դրամ:
7.	Բարեգործությունն ստացողը	«Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի» կրոնական կազմակերպություն:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թ. մարտի 10–ից մինչև 2022 թ. սեպտեմբերի 10-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Սուրբ Հովհաննես եկեղեցուն հարակից հենապատերի ամրակայման և վերականգնման շինարարական աշխատանքների իրականացում՝

		22,889,840 դրամ, նախատեսվում է իրականացնել 2022 թ. մարտի 10-ից մինչև 2022 թ. սեպտեմբերի 10-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հենապատերի ամրակայման և վերականգնման շինարարական աշխատանքների իրականացում՝ 22,889,840 դրամ, որից՝ աշխատանքների արժեքը կազմում է 10,992,110 դրամ, շինանյութերի արժեքը կազմում է 11,897,730 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությամբ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի իրականացման հաշվետվությունը ներկայացվելու է ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգով սահմանված՝ լիազոր մարմին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈՒՆՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ